29.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1594 - Ն որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԸ

1. Սույն կարգով սահմանվում է «Նյութական պահուստի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ Կազմակերպությունների կողմից կուտակման ենթակա ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման ծավալների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի և ձևաչափի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառված հասկացությունները գործածվում են «Նյութական պահուստի մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Մաքսային վերադաս մարմինը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը լիազոր մարմին է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ընդգրկված նյութական արժեքների ներմուծման ծավալների վերաբերյալ տեղեկությունը՝ համաձայն ձևի:

4. Ներմուծվող նյութական արժեքների անվանացակը մաքսային վերադաս մարմնի կողմից ներկայացվող տեղեկանքում շարադրվում է ըստ ԱՏԳ ԱԱ-ի հետևյալ ծածկագրերի՝

Նյութական արժեքի անվանումը	Նյութական արժեքի ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը
Պարենային ցորեն	1001 91 200 0
Շաքարավազ և դրա արտադրության համար անհրաժեշտ հումք	1701
Բուսական յուղ	1507 10 900, 1507 90 900,

	1511 (բացառությամբ 1511 10 100 0, 1511 90 910 0), 1512 (բացառությամբ 1512 11 100 0, 1512 19 100 0, 1512 21 100 0, 1512 29 100 0)
Դիզելային վառելիք	2710 19 421 0, 2710 19 422 0, 2710 19 423 0, 2710 19 424 0, 2710 19 425 0
Ավտոմոբիլային բենզին	2710 12 411 0, 2712 12 412 0, 2710 12 413 0, 2710 12 450 0, 2710 12 490 0, 2710 12 510 0, 2710 12 590 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

_____ ընթացքում ՀՀ ներմուծված

(հաշվետու ժամանակահատված)

_____ ծավալների վերաբերյալ

(ռազմավարական պաշարում ամբարվող նյութական արժեքի անվանումը)

NN ը/կ	Ներմուծող կազմակերպության անվանումը	Ներմուծված նյութական արժեքի ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրերը	Քանակը (տոննա)	Ծանոթություն

ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ----------

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.